ԻՆՉՊԵ՞Ս Է ԱՍՏՎԱԾ ԽՈՍՈՒՄ ՔԵԶ ՀԵՏ

Լսո՞ւմ ես ինձ հիմա

Մաս 2

«Մեկ անգամ կխոսի Աստված, և մյուս անգամ. բայց մարդս ուշադրություն չի տալիս:» Հոբ 33:14

Աստված Խոսում Է Հետևյալ Վեց Կերպերով

1. Աստված խոսում է Աստվածաշնչի միջոցով

«Ամեն գիրք Աստվածաշունչ են և օգտակար, վարդապետության, և հանդիմանության, և ուղղելու, և արդարության խրատելու համար:» Բ Տիմոթեոս 3:16

«Քո խոսքը ճրագ է իմ ոտների համար, և լույս իմ ճանապարհի համար:» Սաղմոս 119:105

2. Աստված խոսում է օժտված ուսուցիչների միջոցով

«Եվ նա մի քանիսին տվավ առաքյալներ լինելու, մի քանիսին մարգարեներ, մի քանիսին ավետարանիչներ, մի քանիսին հովիվներ և վարդապետներ, սուրբերի կատարելությանը համար, պաշտոնի գործի համար, Քրիստոսի մարմնի շինության համար:» Եփեսացիս 4:11-12

«Զանազան պարգևներ ունենք այն շնորհքի պես որ մեզ տրված է. թե մարգարեություն՝ հավատքի չափովը մարգարեանանք:» Հռովմայեցիս 12:6

«Խոսում ենք՝ ոչ թե մարդկային իմաստության սովորած խոսքերով, այլ Սուրբ Հոգու սովորեցրածներովը՝ հոգևորներն հոգևորների հետ համեմատելով:» Ա Կորնթացիս 2:13

3. Աստված խոսում է ընտանիքի և ընկերների միջոցով

«Արդարը ճանապարհ է ցույց տալիս իր ընկերին:» Առակաց 12:26

«Հիմարի ճանապարհն ուղիղ է իր աչքի առաջին, բայց խրատ լսողն իմաստուն է:» Առակաց 12:15

«Անկեղծ են բարեկամի տված վերքերը. բայց առատ են ատողի համբույրները:» Առակաց 27:6

4. Աստված խոսում է Սուրբ Հոգուց եկած տպավորությունների միջոցով

«Սուրբ Հոգին...ամեն բան կսովորեցնի ձեզ, և կհիշեցնի ձեզ ամեն ինչ որ ձեզ ասեցի:» Հովհաննես 14:26

«Նույն ինքն Հոգին վկայություն է տալիս մեր հոգուն հետ, որ մենք Աստծո որդիք ենք:» Հռովմայեցիս 8:16

«Մեկ անգամ կխոսի Աստված և մյուս անգամ երազում՝ գիշերի տեսիլքում ... անկողինի վրա քնելիս: Այն ժամանակ նա բանում է մարդկանց ականջը, և նրանց խրատելով կնքում է, որ մարդիս հեռացնի վատ գործերից, և ամբարատավանությունը ծածկի մարդից:» Հոբ 33:14-17

<u>Միշտ համեմատիր տպավորությունները Աստվածաշնչի հետ</u>

<u>Աստված երբեք չի հակասում այն ամենին, ինչ արդեն ասել է</u>

5. Աստված խոսում է ցավի միջոցով

«Հարվածի վերքերը մաքրում են չարությունը:» Առակաց 20:30

«Լավ է ինձ համար որ խոնարհվեցա, որ քո հրամանները սովորեմ:» Սաղմոս 119:71

6. Աստված խոսում է լռության միջոցով

«Սավուղը Տիրոջը հարցրեց, բայց Տերը չպատասխանեց նրան՝ ոչ երազներով, ոչ ուրիմով, և ոչ մարգարեներով:» Ա Թագավորաց 28:6

«Եթե նա երեսը ծածկի, ո՞վ է կարող նրան տեսնել. թե մի ազգի համար, թե մեկ մարդի համար՝ մեկ է:» Հոբ 34:29

«Կանչիր ինձ նեղության օրումը. և ես կազատեմ քեզ, և դու կփառաբանես ինձ:» Սաղմոս 50:15

Հաջորդ Կիրակի

ԻՆՉՊԵ՞Ս ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼ ԱՍՏԾՈՒՑ

Հովիվ Սարօ Խաչիկեան